ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/58

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8874-2019 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/618-2019 գրության հիման վրա, 29.05.2019թ. «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.05.2019թ. թիվ ՊՆ/02/618-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-9/9-3 ծածկագրով գնման Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2019թ. մայիսի 6-ից միակողմանի՝ մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 22.05.2019թ. միաժամանակ ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Միևնույն ժամանակ աղյուսակով ներկայացրել են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, իսկ պահանջվող փաստաթղթերը կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.05.2019թ. գրությամբ դիմել է «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8874-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն մասնակցելով 2018 թ-ին հրապարակված «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» և ««ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/14-3» մրցույթների ճանաչվել է հաղթող պետք էր մատակարարվեր ապրանքները հստակ նշված ժամկետներով, սակայն արտադրող կազմակերպությունների կողմից տեխնիկական պատճառներով ապրանքների

մատակարարումը կատարվել է ժամկետից ուշ և առաջացել է հետևյալ երկու բողոքարկման ընթացակարգեր ՍՑ-ԼՕ-2019/58 և ՍՑ-ԼՕ-2019/58, որոնք հրապարակվել են ՀՀ գնումների պաշտոնական կայքում գնումների Ընթացակարգին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հետևաբար «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն իր ջանքերը չխնայելով ապահովել է որոշակի քանակի ապրանք, որը առկա է եղել իր պահեստում և որոշակի պարագաներ նաև ձեռք բերելով ներքին շուկայից ավելի բարձր գնով քան ՀՀ պաշտպանության նախարարության պայմանագրային գներից, մատակարարել է Պաշտպանության նախարարության բազա պահպանելով պայմանագրային գները, իսկ մնացորդային քանակը հնարավոր չի եղել մատակարարել քանի որ պարագաները ներմուծվել են ՀՀ տարածք պայմանագրային ժամկետից ուշ, կրկին հիշեցնելով արտադրող կազմակերպուտյունների կողմից արտադրատեխնիկական խնդիրների հիման վրա: «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն ներդնելով իր բոլոր ուժերը փորձել է պահպանել ժամկետների ճշտությունը և ոչ մի ուշացման դիտավորություն չի ունեցել ապրանքների ուշ մատակարարման և չմատակարարման հարցում:

Դիրքորոշմանը կից, Բողոքներ քննող անձին են ներկայացրել՝

- Արտադրող կազմակերպությունների կողմից ուղղարկված հաշիվ ապրանքագրերը և արտատեխնիկական նամակը ապրանքների ուշ մատակարարման մասին:
- Ներքին շուկայից ձեռք բերված ապրանքների հաշիվ ապրանքագրերը:
- Պաշտպանության նախարարություն մատակարարված ապրանքների հաշիվ ապրանքագրերը:

Ներկայացված լրացմամբ Մասնակիցը հայտնել է, որ ««Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն ներկայացնում է նախորդ դիրքորոշման հիման վրա, որը վերաբերվում է ՍՑ-ԼՕ-2019/58 և ՍՑ-ԼՕ-2019/58 նիստերին ներկայացնում է հավելյալ փաստաթղթեր, ըստ պահանջի, որն իր մեջ ներառում է 2 թարգմանված ներկայացուցչական, 2 թարգմանված տեղեկատվական փաստաթղթեր, 1 ներկայացուցչական նամակ բնօրինակով. Well Lead կազմակերպության հաշիվ ապրանքագիր և Մարգ Ֆարմացիա ՍՊԸ-ի տեղեկատվական նամակը:

4. <u>ՍՑ-ԼՕ-2019/58 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9-3» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 01.09.2018թ.-ը (4-րդ եռամսյակը):

www.gnumner.am համացանցային կայքում 30.05.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի միջև 09.04.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/9-3» ծածկագրով պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 06.05.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը՝ 30 օրից ավելի):

Չինական արտադրող կազմակերպության՝ «ՎԵԼԼԻԴ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ բարդ արտադրատեխնիկական խնդիրների պատճառներով «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի 18WLH695AM պատվերը, որը վերաբերվում է ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար գնման գործընթացին մատակարարում ապահովելուն (F01A011610, 12621405, 12621605. 12621805, 12452004, 12452204,12452404, A01A017510, A03A01 3510, A03A013710, 43034000, A01B016010, A01B016510. A01B017010, A01B017510, A01B018010, A01C016010, A01C017010, A01C017510, A01C018010, A01C019010, A01E016510, A01E017010, A01E017510, A01E018010, A01F017010, A01 F017510, A01F018010, A01F018510, A01F019010, A05B013010 , A05B014010, A05B015010, A07A010410, A07A010510, A07A010610, A07A010710, A13C030112, WB1003BFYNP-TPHS) ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն ժամկետից մի քանի ամիս ավելի ուշ, քան նախատեսված էր: Ապրանքների տեղափոխման մոտավոր ժամկետը Չինաստանից Հայաստանի Հանրապետություն տևում է երկուսից երեք ամիս:

Հոնգ Կոնգի արտադրող կազմակերպության՝ «ՉԵՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ բարդ արտադրատեխնիկական խնդիրների պատճառներով «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի 18WLH695AM 27.03.18թ.ի պատվերը, որը վերաբերվում է ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար գնման գործընթացին մատակարարում ապահովելուն (CS32,LC60, LC80) ուղարկվել է Հայաստանի Հանրապետություն ժամկետից մի քանի ամիս ավելի ուշ, քան նախատեսված էր:

Ապրանքների տեղափոխման մոտավոր ժամկետը Հոնգ Կոնգից Հայաստանի Հանրապետություն տևում է երկուսից երեք ամիս:

ՀՀ-ում գտնվող «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի պահանջած ապրանքատեսակները չի կարող մատակարարել, քանի որ պահանջված ապրանքատեսակները պահեստում առկա չեն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8874-2019 գրությամբ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն' պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ' պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 01.09.2018թ.-ը (4-րդ եռամսյակը):

Արտերկրում գործող արտադրող կազմակերպությունների՝ «ՎԵԼԼԻԴ» ՍՊ և «ՉԵՔՍ» ՍՊ ընկերությունների կողմից տրված տեղեկությունների համաձայն՝ բարդ արտադրատեխնիկական խնդիրների պատճառներով «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի՝ ՀՀ Պաշտպանության նախարարության կարիքների համար գնման գործընթացին մատակարարում ապահովվմանն ուղղված պատվերներն ուղարկվել են Հայաստանի Հանրապետություն ժամկետից մի քանի ամիս ավելի ուշ, քան նախատեսված էր:

ՀՀ-ում գտնվող «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ-ն «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի պահանջած ապրանքատեսակները չի կարող մատակարարել, քանի որ պահանջված ապրանքատեսակները պահեստում առկա չեն:

Նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորության անպատշաճ կատարելը

տեղի է ունեցել Պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքների արտերկրից ՀՀ ժամկետից ուշ ուղարկելու պատճառով: Նման պայմաններում պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգը մերժելու միջոցով:

Ուստի նման պայմաններում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.05.2019թ. թիվ 26/26-1/8874-2019 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**